

ՄԱՂԻԿ շաբաթը երկու անգամ կը հրատարակուի Չորեքշաբթի եւ Շաբաթ օրերն : — Տարեկան բաժանորդագրութեան գինն է 100 դրուշ արծաթ : — Վեցամեայն 50 . — Գուտաւաց համար 115 դրուշ . — Վեցամեայ 60 . — Իրանուցման տողը 5 դրուշ :



Որ եւ է նամակ կամ գրութիւն պէտք է ուղղել :
Ա. Արտոնատեր և Տնօրէն
ԱՆՏՕՆ ՄԱԲԱՅԵԱՆ
Իսկի Զաղթիյէ Դասակախ
Նշան էՖ. Պերդերեանի Տղա-
բանն :
Խմբագրութեան յանձնուած
գրութիւնք կտ չեն տրուիր :

40 Փ Ա Ր Ա

Հ Ա Ն Դ Է Ս

Փ Ա Ր Ա 40

Ա Ձ Գ Ա Յ Ի Ն ԵՒ Բ Ա Ղ Ա Յ Ա Վ Ա Ն

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ւ Թ Ի Ի Ն

Ազգային անտութիւն (Ընդհանուր վիճակ գաւառաց) — Իրադատական — Մայ . եկեղեցւոյ վիճակը — Ազգային լուրեր . — Կայս . շնորհ : — Գիւղէ վերագարձ . — Ժողովրդային առողջապահութիւն . — Առանին խրատներ — Իրանուցմունք :

Ա Ձ Գ Ա Յ Ի Ն Տ Ե Ս Ո Ւ Թ Ի Ի Ն

Ը Ն Դ Ն Ո Ւ Ի Ր Վ Ի Ճ Ա Կ Գ Ա Ի Ա Ռ Ա Յ

Ա.

Մաղիկի Խմբագրութիւնն ստանձնած օրէ—ինչպէս և Լոյսի հրատարակութեան միջոցին—մեզի կէտ նպատակ դրինք գլխաւորաբար զբաղել Հայկեանքի կենսական խնդիրներով և առայս լուրջ նկատողութեան առարկայ ընել մանաւանդ մեր ազգային, բարոյական, կրթական և ընտանեկան վիճակն և այն պայմաններ՝ յորս կը գրտնըւինք :

Ուրախ ենք և — ներուի մեզ ըսել նաեւ — հպարտ զի մեր անտութիւնք և դիտողութիւններ համակրական ընդունելութիւն կը գտնեն ընդհանրապէս : Այս բան մեզ գրգռու և քաջալեր կուտայ ընդհանրացնելու համար մեր տեսութիւններ և տարածել նաեւ մեր Հայաբնակ գաւառաց կրօնական, բարոյական, կրթական, առտնին, առողջական, արհեստական և նիւթական վիճակին վրայ այնքան, ցորչափ մինք

տեղեկութիւն ունինք և հետազոտութիւններ ըրած ենք մեր ի դաւարս ազգւորութեան միջոցին :

Այսու հանգերձ՝ չենք յաւակնիր կարծելու թէ մենք ամեն բան կրցած ենք ճշգիւ ուսումնասիրել, այլ այնքան միայն հետազոտած ենք, ինքնին որ կը ներէին մեր ժամանակ և միջոցք, եթէ բովանդակ Հայաբնակ գաւառներն այցելու ոչ առիթ և ոչ ատեն ունեցած ենք՝ ուստի շատ գոհ կը լինինք եթէ այս մասին մեզի տեղեկութիւն հաղորդուի ձեռնհաս անձանց կողմէ, որ անշուշտ կարելոր ծառայութիւն կը մատուցանեն ոչ թէ մեզի— զի մենք մասնաւոր շահ չունինք — այլ ընդհանուրին . որոյ օգտին և բարւոյն ծառայել մեր ամենուն պարտքն է :

Սկսինք ուրեմն նկարագրել մեր հունապարհորդական նկատողութիւններն ու ազգւորութիւններն :

Զառաջինն 1867 մայիս 20ին էր որ Պոլսէն մեկնեցանք երթալ ստանձնելու համար տնօրէն-դասատուի պաշտօնը Սիվրիհիսարի այն մասնաւոր վարժարանին, զոր հաստատած էր տեղւոյն Օգնական ընկերութիւնը, որ կը բաղկանար իբր քսան բանիբուն և ուսումնառէր անձերէ, որոց իւրաքանչիւրն 5ական սկի գնելով 100 սկւոյ համետա գօտմար մը կը կազմեն, զոր շահագործելով 2-3 տարւոյ մէջ գրեթէ 500 սկւոյ կը հասնի, որ տտեն

մասնաւոր գպրոցի մը հաստատման կը ձեռնարկեն . միւս կողմէ շարունակելով նոյնպէս դրամագլուխն աւելցնել, որում սառ մեծապէս կ'աջակցէր Սիվրիհիսարցի վաճառական ներսէսեան կարապետ էֆէնտի անուն ծանօթ և եռանդուն ազգայինը :

Գրեթէ անկարելի է նկարագրել այն եռանդ և աւիւն, զոր կը տածէինք երթալ այցելու համար գաւառներն, որոց մասին շատ բան լսած և շատ բան կարդացած էինք :

Այս բուն անկջայնքան ազգուէր, որ վերջապէս հարկադրեց զմեզ զոհել մեր վայելած հանգիստն և մեծագոյն շահը, զոր ունէինք տատ, և գրեթէ տղու նման խնդալով ու խայտալով հեռացանք ի Պոլսէ, որովհետեւ նոր տեղեր պիտի տեսնէինք, Հայաբնակ գաւառներ պիտի երթայինք, սիրելի յարգելի և յաւատարմութեան ու սխրալի ինչատակներ պիտի այցէինք և շատ հետաքրքրելի նիւթեր, հեաքեր ու առարկաներ հետազոտութեան և ուսումնասիրութեան առարկայ պիտի ընէինք :

Ահա այսքան մեծ էր մեր սէրն ու փափագ ծառայելու գէթ գաւառի մը ազգայնոց կրթական գործին և թէ յագեցնելու համար մեր բուն տնէջը նոր բան տեսնելու և նոր բան սորվելու համար :

Կրնանք առանց յաւակնելու և ամենայն համեմատութեամբ ըսել թէ այս

ուղեւորութիւն կրցաւ նաեւ մեզի ոչ նուազ օգտակար ըլլալ շատ պարագայի մէջ:

Շոգեհասակն երեսնէ յետոյ առաջին Հայաբնակ իջեւանէն սկսեալ մանրամասն ուշադրութիւն դարձուցինք բուն Հայու կեանքին վրայ և խորապէս դիտելով և հետազօտելով այն ամեն բան, որ կը վերաբերին Հայու կրօնական, բարոյական, առտնին, կրթական, տրնտեսական, արհեստական և նիւթական վիճակին և նորա բարուց, վարուց, սովորութեան, կենցաղին, ընկերային և տեղական պայմանաց, հաւատոյն, զգացմանց, ճաշակին, նախապաշարման և այլն, և այլն:

Պօլսէն մեկնելէ առաջ պատմութեան վերաբերեալ արդէն շատ բան կարդացած էինք, բայց Տաթեւացին՝ զոր Գերբեր Մելքիսեդեկ Մուրատեանցի հետ յիւսկիւտար—յայնժամ Պ. Գարեգին—քանիցս սքանչանօք կարդացած և ուսումնասիրած էինք, գրեթէ մեր միակ առաջնորդն էր հետազօտութեան, այն Տաթեւացին կ'ըսենք. յորում ամփոփեալ են կեանքն ու եկեղեցին Հայուն, և ստուգիւ շատ արժանի ընթերցման, բայց հիմա արդեօք այդ պատուական մատենին պարտ ու պատշաճ յարգ ընծայող կա՞յ(1):

Փափագելի է որ մեր պատուարժան եկեղեցական հայրեր առտուածարանութիւն կոչուած դասական ուսումը փոխանակ լատին կամ յոյն հեղինակաց գործերու մէջ որոնելու պրպանեն եւ հետեւին մեր բուն նախնեաց շատ յարգելի գործերը յորս լինովին կը գտնենք Հայաստանացի Սուրբ, Ընդհանրապէս, Առաքելաբար և Կաթողիկէ եկեղեցւոյ անստու և անվրէպ վարդապետութիւնը, որ անհնէ դժնդակ պարագաներու մէջ ինչ քաջայաղթ հանդիսացաւ վեհապանծօրէն:

Այս բան ժամանորայէս յանձնարարելէ յետոյ՝ անցնինք դարձեալ մեր նիւթին:

(1) Յարցելի և յազանդուոր Տօթեթիբեաքեան էֆէնտի որ շատ սիրահար է այս տկասկ գործոց, մօտերս լուրջ ուսումնասիրութեան առարկայ ըրած, որանչացած և իւր տպագրութիւններ ի գիր աւելով նուիրած է Մարկոս էֆէնտի Աղաբէկեանին:

Առաջին տպագրութիւնը, զոր ունեցանք մեր ճանապարհորդութեան միջոցին, սա եղաւ թէ՛ ուր որ գացինք, գիւղ, գիւղաքաղաք կամ քաղաք, եկեղեցասիրութեան զգացումը դեռ կենդանի պահուած էր, և այս բան մեծ մխիթարութիւն պատճառեց մեզ, որովհետեւ՝ ըստ հայկական նախնի սովորութեան՝ ամեն ոք՝ հարուստ թէ աղքատ, արհեստաւոր թէ վաճառական և պատանի կամ երիտասարդ նախ քան գործի երթալը՝ անպատճառ եկեղեցի պիտի երթայ՝ աղօթէ և Աստուծոյ օրհնութիւնն հայցելէ յետոյ պիտի երթայ իր գոիծին, որովհետեւ մէկն եթէ եկեղեցի չերթայ այն օր, կարծես լանցաւոր մը կը համարուիլը ընկերակիցներու առաջ, որ երեսը վար կ'առնեն:

Ի Պիլէճիկ, ուր կեցանք մի քանի օր, վարդան աղա անուն անձն հինգ շաբթի տուաւ տեղեկացի չէր գացած իւր ընկերներ ցերեկն յիշեալի խտնութիւն երթալով կ'ըսէին՝ «անցած ըլլայ, թէ որ հիմա գրեղ հոս չտեսնէինք, իրիկունը հիւանդտես պիտի գայինք» և այսպէս կը պախարակէին զինքը նոյն օր եկեղեցիէ բացակայ գտնուելուն համար:

Քէօթահեացի մ'ալ կ'ըսէր. եթէ օր մը եկեղեցի չերթամ, այն օրը կարծես գործս շատ գէշ կ'կրթայ և կամ դժբաղդութիւն մը կը պատահի ինձ. իսկ ամեն անգամ որ եկեղեցին աղօթեմ և ժամերգութեան ներկայ դառնուիմ, հոգիս կը փառաւորուի և սիրտս հանգստութիւն կ'գգայ:

Ինչ որ ալ ըսուի կամ առարկուի սոյն համոզման ընդդէմ, սա շատ ստոյգ է թէ՛ եկեղեցի երթալն ալ դաստիարակութիւն է. զոր գաւառացի Հայն անդ՝ պահած է, ինչպէս որ օրինակը կ'երեւայ աստ պանդուխտներու վրայ, որոցմով կը լցուին Պօլսոյ եկեղեցիք, իսկ արձարանները կամ քաղինօներն ալ կը լցուին տեղացիներով, որ փոխանակ եկեղեցի երթալու՝ դժբաղդաբար թուղթ կամ նարտ խողայով կ'անցունեն զԱստուած փառաբանելու ժամանակը մինչդեռ յԱնգղիա, Միկրիկա և այլ դարգացեալ երկիրներ սըրճարան, կաղինօ և ուրիշ զբօսական վայրեր գոց կը մնան, մինչեւ որ եկեղեցական արարողութիւնը չաւարտին:

Թէ մենք այս սիւնակաց մէջ ինչո՞ւ այնքան մեր հոգածութեան առարկայ կ'ընենք եկեղեցասիրութիւնը, կարծենք աստ զարմանալու ոչինչ կայ և շատ բացայայտ է, զի մեր եկեղեցին մեր աղգային գոյութեան և պահպանութեան խանձարուն եղած է ի սկզբբանէ անտի և ցայսօր. այնպէս որ՝ եթէ վերցուի եկեղեցին, չմնար նաեւ Հայութիւն:

Այս բացատրութենէ յետոյ՝ որ շատ ճիշդ է. արդեօք կարելի է այլապէս խորհիլ, մտածել և կամ նկատել զմեզ իբր մուլեանդ ոք, իբր թէ կրօնասիրութեան զգացում արժարժելը մուլեանդութիւն նշանակէր:

Բաց այլոց՝ Անգղիոյ ազատական կուսակցութեան պետն՝ մեծանուն Պ. Կլատտօն բարեպաշտ և կրօնասէր ըլլալով հանդերձ՝ մին է նաև ժամանակիս մեծ մարդերէ:

Եւ ինչո՞ւ կրօնասիրութիւնը եկեղեցասիրութիւնը նկատուի մուլեանդութիւն, քանի որ Հայաստանեայց եկեղեցին ազատական պաշտելի եկեղեցի է:

Եթէ մենք քարոզէինք կամ յանձնարարէինք աւելորդապաշտութիւն, խնդիրն յայնժամ կը փոխուէր, բայց այլ է աւելորդապաշտութիւն և բուրովին ուրիշ բան է ճշմարիտ կրօնասիրութիւնը՝ հիմնեալ Հայաստանեայց եկեղեցւոյ ազատական սկզբանց վրայ. որ քաղաքակրթութեան և գիտութեան բարեաց չեն հակառակիր երբէք. մանաւանդ թէ մեր նախնի երանաշնորհ և բաղմբերախտ Հայրեր՝ Մեծն Սահակ և Պարթեւ, Եզնիկ և այլն, իրենք գիտութեան աշակերտ և ապա ի Հայս նոյնպէս և գիտութեան առաջին վարդապետ եղած են՝ բանալով վարժարաններ, ծաւալելով գիտութեան լոյսը և մեզ շատ թանկագին գործեր թողլով, զորս տակաւին շատ հիացմամբ կը կարդանք, և իրենց գործոցը մէջ եթէ կան կէտեր որ կը հակառակին արդի գիտութեանց, անոնք իրենց սխալները չեն, այլ նոյն ժամանակի տիրող դրութիւններ:

Ժան-Ժազ-Ռուսօյի շէլը խորհիմ, ապա գոմալ ի մեզ ի նախնի ժամանակ անձանթ գաղափար մը չէր. Սարկաւազ վարդապետն աստի իբր Տ-Թ. դար առաջ գայդ սկզբունք հռչակած է:

Պատմութիւնը կը վկայէ թէ Հայուն քաղաքակրթութեան ոսկեգարը Քրիստոնէութեան չորրորդ դարէն կ'ըսկսի, յորմէ փայլեցան շատ մեծ հանճարներ և գուրս եկան շատ բարձր տաղանդներ, յորոց բազումը «ապառաջ» քահանայ, վարդապետ, եպիսկոպոս և կաթողիկոս էին:

Մեր նոխեաց գործերուն մէջ պահուած է ոչ միայն Հայ-լեզուն, այլ նաեւ նախնի Հայուն կեանքը. այն է, կրօնը, բարոյականը, առանին կենցաղը, ուսումը, գիտութիւնը, քաղաքակրթութիւնը, արուեստները, ճարտարութիւնը, արհեստները, և այլն, և այլն, որ ուշադիր բանասիրաց հետազոտութեան և ուսումնասիրութեան առատ և անսպառ նիւթ կը մատակարարեն և ի յայտ կը բերեն սախիստ պայծառ ճշմարտութիւնը որ թէ՛ եթէ Եւրոպայսօր կը պարծիքը հեղինակ քաղաքակրթութեան, Հայք Ահ դար առաջ արդէն շատ քաղաքակրթեալ ժողովուրդ էին:

Ի Հայաստանի գաւառս այժմ եթէ տեղ տեղ խաւար և տգիտութիւն կը տիրէ, բայց ուրիշ բաներու հետ նաեւ դեռ վառ կը մնայ կրօնասիրութեան ոգին, և եթէ ուրեք ուրեք այս վերջին ժամանակներ կրօնափոխութիւնք տեղի կ'ունենան, ատոնք թելագրութեանց և եթ արդիւնք են և ոչ երբէք հետեւանք համոզման կամ անտարբերութեան դէպ առ Հայաստանեայց Սուրբ, կաթողիկէ, Առաքելական և Ընդհանրական եկեղեցին:

Բողոքական եւ ճիզուիթ միսիոնարք տեսնելով որ Հայուն հաւատը քարոզութեամբ խտխտել և զանոնք որսալն անկարելի է, ուրիշ միջոցներով կը փորձուին ի կրօնափոխութիւն հրաւիրել, այն է, պաշտպանութիւն խոստանալով, բան մը որ սակայն Հայուն և եթ չմաստեր, այլեւ հակառակ է նաև մեր բարեխնամ տէրութեան ճշմարիտ շահուն. զի նոքա—միսիոնարք—օտար են և անշուշտ գործիք օտար ազդեցութեանց տարածման:

ԳՐԱԴԱՏԱԿԱՆ

Բ.

Վարժապետի Աշէնը իւր սահուն ոճին և ճոխ բացատրութեան համար իբր գրական մի գեղեցիկ գործ ոչ նուազ արժէք ունի, որ պատիւ կը բերէ դե-

ռատի Հեղինակին:

Իսկ գործին ոգին և բուն նպատակըն է պարզել և մատնանիչ ընել հետեւանքը այն վնասակար դադափարին զոր կը տածեն շատ մը ծնողք՝ մանաւանդ մայրեր զարմանալի նախապաշարմամբ մը, այն է, իրենց աղջիկը վեր տեղ տալ, նախապաշարում, որոյ նպատակը թէպէտ բարի, սակայն արդիւնքն ու վախճանը—հազիւ աննշմարելի բացառութեամբ—ողբերգական եղած է ընդհանրապէս:

Համակրելին Տ. Կասարական էֆէնտի իւր այս գործին նիւթը կ'առնու իրական դէպքէ, զոր շատ կենդանի գոյներով կը նկարագրէ, խեղճ վարժապետին աղջկան կրած բարոյական թշուառութիւնները կը պատկերէ, որ յանգած է ապա շատ ազետալի վախճանի մը և Ֆայդ խեղճ աղջիկ զոհը եղած է իւր ծնողաց նախապաշարման, ծնողաց, որ ամիրայի զաւակը նախադաս համարեր են պարկեշտ ու պատուաւոր վաճառականէ մը, որ իր գործոցը զաւակն եղած է:

Այս գործ պատուական դաս մ'է ընդդէմ անյարմար ամուսնութեան, որ ամուսնութիւնը ատելի դարձնող պարագայներէ մին է, որ վրայ մենք եւս Լոյսի, «Պատկեր-Հայ-Կենաց» և Կիրակնօրեայ-Հայրենիք» մէջ ոչ նուազ սուշադրութիւն դարձուցած ենք և որոյ մասին Մաղիկի մէջ եւս ունինք գրել:

Կասարական էֆէնտի նոյնպէս ոչ նուազ ճարտարութեամբ նկարագրած է ամիրայական կեանքը, ամբարտաւանութիւններն, յաւակնութիւնները և նոցա իւրեանց զաւակը բարուք կըրթելու մասին անփութութիւնը, որով իրենց լաջորպք դժբաղդաբար զեղիս, շաւլ, շփացած ու մեծցած և—շատ փոքրիկ բացառութեանէ մը զատ—իրենց հետ դադրած ու վերջացած է փայլն ու պերճութիւնը իւրեանց տոհմին:

Վարժապետի «Աշէն» գործին մէջ ամիրայի կենաց ճշգրիտ նկարագրութիւնը ապագային առաջ պատմական մեծ կարեւորութիւն ունի. ուստի, այս նրկատմամբ եւս սոյն վկայ նշանակելի առաւելութիւն կ'օտանայ:

Վարժապետի Աշէնը բարոյականի տեսակէտով նոյնպէս յանձնարարելի գործ մ'է:

Թորոս պէյ անուն անձն ամուսնացեալ կին մը՝ որպէս է Վարժապետին Աղջիկն՝ Աստղիկ՝ Յակոբ էֆէնտիին հարսը գլխէ հանելու համար լարած է բազմաթիւ վատ էնթրիկներ և սոսկալի մեքենայութիւններ, ոյց Աստղիկ ցոյց տուած է դիւցազնական հաստատամութիւն վասն անաղարտ պահպանման իւր հաւատարմութեան ուխտին, և այս պատճառաւ յիշեալ Թորոս պէյ ի գործ դրած է վրէժխնդրական ամենացած միջոցներ, այրն իր կնոջմէն պաղեցնելու և հուսկ ապա այն ամենավատ որոգայթը, դժոխային ամբարտանութիւններն և իւր վիլիսոփայական լրբենի վարդապետութիւնները ձեռք առած է որովք յաջողեցաւ զայրն՝ ամիրայի որդին՝ Արամը իկնուջէն բոժնելու:

Այդ մարդը՝ որ իբր բարեկամ և մտերիմ Յակոբ էֆէնտի տունը մտնելէ և մեծ յարգ ու համարում վայելէլէ յետոյ՝ ամենամանարգ վատութեամբ գործը մինչեւ ցլեախն կէտ կը մղէ, և սակայն տակաւին չդադրելով խնդիրը երբ Դատաս խորհրդով կը ներկայի սադրանօք այդ անագորուն արածին՝ ամեն ջանք ի գործ կը դնէ մէկ կողմէ թշուառ այլ անմեղ ու առաքինի կնոջ՝ Աստղիկի ընդդէմ խիստ աննպաստ վճիռ մը ձեռք բերելու՝ եւ միւս կողմէ ալ ամենակատարեալ լրբութեամբ խեղճ աղջկան պարզամիտ ծնողաց հաւտացնել կը ջանայ որ ինք իբր թէ իրենց աղջկան պատիւը պաշտպանելու կ'աշխատի. և այս բան կ'ընէ, որպէս զի ծնողացը միջոցաւ կարենայ Աստղիկի համակրութիւնը շահիլ, բայց ի զո՛ւր. Աստղիկ միշտ նոյն Աստղիկն է, այսինքն միշտ մաքուր, միշտ անարատ, միշտ առաքինի և միշտ արի ու անյողդողդ և ահա այսպէս ի հող կը մտնէ անբասիր և առաքինի կենօք անցնելով կենաց այն դառն պայքարներէ, ոյց առաջ չ'ընկճեցաւ իւր վեհ հոգին:

Եթէ դտնուին ոմանք որ Թորոս պէյի լրբենի վարդապետութեանց համար անբարոյական դատին գործը, բացայայտ է թէ շատ հարեւանցի գատաստան կ'ընեն, որովհետեւ չարը բարւոյն, ուստը՝ ճշմարտին, մոլութիւնն՝ առաքինութեան, ագեղը՝ գեղեցիկն և խաւարը՝ լոյսին բացատրութիւնն է:

Այսպէս, Աստղիկ, տկար արարած մը, յաղթեց սակայն շատ զօրաւոր հակառակորդի մը պահելով իւր հաւատարմութիւն, զոր ուխտած էր:

Ուրիշ բարոյական մ'ալ:

Թորոս պէյի լպիրշ և ամենավատ ընթացքը դաս մ'է նա'ւ զգուշանալու տուն չմացնելու համար այնպիսի անձեր, որոց բարոյականը չէ փորձեալ ճշդապէս:

Այս գործին իբր վէպ ունեցած թեթեւ թերութիւններ՝ որ շատ կատարեալ երկերու մէջ իսկ կրնան սպըրդիլ, անոր իսկական արժէքը չեն բեկաներ երբէք, վասն զի յեզուն, նիւթը, պատմական մասը, դարձուածներ, կեանքի ուսումնասիրութիւնները, ծնողաց իրենց ազդիկը բարձր տեղ տալու նախապաշարուածը, այս բանի ընդհանրապէս ծանրակշիռ հետեւանքները և բարոյականը շատ աւելի կ'արժեն այս երկի մէջ, որ դեռևս չէ զինակին գրեթէ առաջին դործն է:

Անշուշտ փափագելի է որ վարչապետին Առջին համակրելի հեղինակը աշխատի միշտ կեանքի խնդիրներով և ոչ թէ ոմանց նման թարգմանելու այնպիսի երկեր, որ մեր կեանքին բնաւ չեն յարմարիր, և, հետեւաբար այնքան օգտակար չեն ըլլար:



ՄԱՅՐ-ԵԿԵՂԵՑԻՐՅ ՎԻՃԱԿԸ

Դ.

Հրատարեալ թաղ խորհուրդը, որ պէս յիշատակեցինք. մանրամասնաբար կը թուէ այն պատճառներ. որ ծանրացած են սնտուկին վրայ և կ'սպառնան եկեղեցւոյն և թէ վարժարանին, ոյց վիճակ քաջալերական լինելէ արդէն շատ հեռի է:

—Նախորդը թաղ խորհուրդը տարեկան իբր 160,000 զչ հասոյթ ցոյց կուտայ, որմէ 40,000ը վճարելի կտակաց, 12000ը կալուածական տրոց, 75,000ը վարժարանաց, 25,000ը պաշտօնէից և 7-800ը նորոգութեանց յատկացեալ են, որ ըսելէ թէ հասոյթը սովորական ծախուց հազիւ կը բաւէ:

Այս պատկերացոյց բուական է ուշադրութիւն դարձնելու թէ ինչ կը լինի ապագան, եթէ, օրինակի համար

այն ընդարձակ և բազմաճիւղ եկեղեցւոյ և վարժարանին վրանդ մը պատահի, որ անհաւանական չէ:

Իսկ գալով վարժարանին, իւր արդի պայմաններով բնաւ չգոհացներ ուսումնասէր թաղեցւոց փափաղը, և որոյ այս վիճակ(1) առիթ և պատճառ եղած է Գում-գափուի նման ընդարձակ և բազմաճայ թաղի մը մէջ բազում մասնաւոր վարժարանաց հաստատման:

Ի Կէտիկ-փաշայ ճիղուիթք և Ամերիկացի քոյր միսիօնարք ունին մէյ մէկ վարժարան, ի Գում-գափու հաստատուած է Գպրոցասէր Տիկնանց Ընկերութեան արդիւնաւոր վարժարանը, դարձեալ ի Գում-գափու Միքիճանեան վարժարանը, ի Մուսայրա Շիշմանեան դպրոցը, Եէնի-գափու Մէշտուածեան երկսեռ վարժարանը(2), և այլն:

Այս հաշուէ դուրս են վարդապետութեան ծաղկոցները, որ մի քանի հատ են, և այս ամենուն նիւթական մնունք տուողները միշտ թաղեցի ժողովուրդն եղած է, որ իր քսակը բացած է նաեւ օտարաց:

Եթէ Մայր վարժարանը բարեկարգ և զարգացեալ վիճակ ունենայ եւ շատ ինամեալ հսկողութիւն ի գործ դրուի. ծնողք յայնժամ ի հարկէ նախամեծար պիտի համարին ազգային վարժարանը, ինչպէս որ այժմ կարի համալրանք կը նայի ժողովուրդը Ղալաթիայ Կեղբ: վարժարանին վրայ, որոյ ծախուց գրեթէ կէսէն աւելին՝ ըստ մեր ճշդագոյն տեղեկութեան՝ թոշակներէ կը գոյանայ, զոր սիրայօժար կը վճարեն ծընողք, վասն զի փորձով կը տեսնեն թէ հոն արդիւնք ինամեալ դաստիարակութիւն և ուշադիր հսկողութիւն կայ:

Ուրեմն, երբէք ճիշդ չէ ըսել թէ Հայը իւր զաւակին կրթութեանը համար ստակ կը ինայէ:

Յրգ, Գումգափուի թաղեցւոց խորհուրդ և ողջամիտ մասն—որ այժմ բարեբաղդաբար փոքրամասն չէ—նկատելով որ իւր եկեղեցւոյ ե վարժարանին արդի վիճակը քաջալերական չէ, նկատելով որ քուէով ընտրեալ թաղ

(1) Նշանակելի կարեւոր պարագայ մ'է թէ այդ վարժարանի մէջ բարոյադիտութեան դուրս իւր բացակայութեամբ կը փայլի:

(2) Ցայտնի է թէ Եէնի քարու, Քումգաբու Կէտիկ փաշա և Գումգաբուի դուրս շատ մերձաւոր թաղեր են:

խորհուրդ մը գործառնութեանց մէջ անհուն գթութեանց կը բաղնի, և այս պատճառաւ նոր ընտրութեան կը յաջորդէ առժամանակեայ վիճակ՝ որ սակայն բարեկարգելու գարձեալ անկարող կը լինի, նկատելով որ Մայր եկեղեցի իբր Պատրիարքական աթոռանիստ եկեղեցի՝ բացառիկ դիրք մ'ունի, և նկատելով մասնաւոր Ղալաթիայ, Բերայ և այժմ փարակէօմիւրեկ ձեռնհաս, կարող, վ տահելի և զղեցիկ Խնամակալութեան շնորհ և բարեկարգութեան, յառաջադիմութեան և արդիւնաւորման ճանբու մէջ կը գտնուին, փրկութեան իբր միակ բանաւոր միջոց կը խորհին Մայր եկեղեցւոյ մատակարարութիւնը և վարժարանը կարող, բանիբուն, վստահելի և տղեցիկ Խնամակալութեան մը յանձնուած տեսնել:

Մենք որ 20 տարիէ հետէ կը բնակինք ի նոյն թաղ և ուր գործօն դեր ունեցած ենք, և թաղին վիճակն ու տեղական հանգամանքները շատ մօտէն գիտենք ու կը ճանչնանք, արգոյ թաղեցւոց խորհող և լրջամիտ մասին տաժած այժմու փափագը շատ օրինաւոր և յարգելի գտնելով վասն բարեկարգութեան, յառաջադիմութեան և արդիւնաւորման՝ ոյց շերմապէս փափագող ենք, խորհուրդ կուտանք և մասնաւորապէս կը յանձնարարենք, որպէս զի իւրեանց այս փափագ օրինաւոր միջոցաւ փութան ժամ առաջ յայտնել Ազգ. Պատկ. վարչութեան ի փրկութիւն մեր սիրեցեալ թաղին. Գում-գափուի, որ իր փառաւոր անցեալովը այնքան նշանաւոր եղած է, և որոյ սակայն արդի վիճակը դժբաղդաբար շատ ողբալի եւ կարեկցութեան արժանի է:

ԱԶԳԱՅԻՆ ԼՈՒՐԵՐ

Գեր. Տ. Գարեգին եպիսկոպոս Սըրուանձտեանց անցեայ հինգ շաբթի օր Ղալաթիոյ եկեղեցին հանդիսաւոր Ս. Պատարագ մատոյց ի հանդիստ հոգւոյ երջանկայիշատակ ներսէս Պատրիարքի վարժապետեան, որոյ մահուան հինգերորդ տարեդարձն էր:

Գեր. Պատարագիչը պերճախօս քարոզով մը մեծանուն հանգուցելոյն կեանքը և ազգային ծառայութիւնները դրուատեց:

Եկեղեցին ի էր խուռն բազմու

Թեամբ և կերբ. վարժարանի Պատ. Խնամակալութիւնը և համայն աշակերտք ներկայ էին սոյն տխուր հանդիսին:

— Կիրակի օր ալ Գառը-գիւղի եկեղեցին նոյնպէս հոգեհանգիստ կատարուեցաւ:

— Գոհութեամբ կիմանանք թէ Պատր. Փոխանորդ Իւթիւճեան Գեր. Տ. Գեորգ Մ. վարդապետ կարնոյ գաւառին առաջնորդ ընտրուեր է:

ԿՍՅՍԵՐԱԿԱՆ ՇՆՈՐՀ

Շարաթ օր Հանդէսս մամուլը դրբուելէ յետոյ մեծաւ գոհութեամբ Իմացանք թէ վեհ. Սուլթանը բարեհաճեր է աղամանդազարդ ապարանջան մը շնորհել Ազնուա. Տիկին Եւզինէ Նազաչեանի (գուստր Տատեան վսեմ. Յարութիւն փաշայի) որ Գերմանիոյ վեհ. Կայսրուհւոյն պատուակալ տիկին կարգուած էր:

Յայտնի է թէ Ազնուա. Տիկին Նազաչեան երկար տարիներէ հեռէ կայս. Կանանոցին թարգմանի պաշտօնը կը վարէ մեծ յաջողութեամբ և Բ. կարգի Շէֆազաթ պատուանշանին արժանացած է:

Նոյնպէս: ոչ նուազ գոհութեամբ իմացանք թէ Ն. Կ. վեհափառութիւն բարեհաճեր է Ազնուա. Օր. Արաքսի վահանեանի (գուստր դատական նախարարարութեան Խորհրդական վսեմ. վահան էֆէնտիի) ազամանդազարդ ապարանջան և Բ. կարգի Շէֆազաթ պատուանշան շնորհել ի վարձատրութիւն այն ծառայութեան զոր իբր պատուակալ Օրիորդ մատոց Գերմանիոյ վեհ. Կայսրուհւոյն:

Նր փութանք մեր ջերմ շնորհաւորութիւններն և ինդակցութիւնը յայտնել Ազնուա. Տիկին Նազաչեանի եւ Ազնուա. Օր. վահանեանի, որ իւրեանց բարձր կրթութեամբն եւ դնահատեղի արժանեօք պատիւ կը բերեն ոչ միայն իւրեանց մեծանուն գերդաստանաց, այլ եւ Հայեկեղեցիկ սեուին:

Մինչեւ հիմա Շէֆազաթ պատուանշանի արժանացած են Հայ-իգական սեուէ Ազնուա. Տիկին Նեքաար (Մայր բարձր. Յակոբ փաշայի): Քաղաքեան, Ազնուա. Տիկին Նազաչեան, Ազնուա. Տիկին Աղանի Կ. Տերունեան (քոյր Բարձր. Յակոբ փաշայի) Ազնուա. Տիկին Ասպետուհին Զունդ եւ Ազնուա. Օր. Արաքսի վահանեան:

ԳԻՒՂԷ ՎԵՐԱԴԱՐՁ

(Վերջընթերթ թուէն)

Երկու կարգի հիւրերը ցերեկուան ճաշը կուշտուկուռ ընելէ, սուրճերն խմելէ և քիչ մ'ալ հանգչելէ յետոյ իրիկուան դէմ սկսան արդուզարդի:

Տանտիկինը կարծելով թէ երթալու պատրաստութիւն կը տեսնեն, ներքեայէս շատ գոհ եղաւ և առ երեսու ուզելով վերջին յարգանք մ'ալ ընել շուտ մը օջարակ պատրաստեց, զոր հիւրերուն հրամցուց, եւ որք մերժելու անքաղաքավարութիւնը բնաւ չունեցան և զօրս ի մի ումպ պարպելէ յետոյ անոնցմէ մին խօսքը տանտիկինը ուղղելով ըսաւ

Հոռոփիկ հանրմ. ինչո՞ւ տահտ չես շտկուեր, հայտէ վրադ չափուիս մը հագիր, էրթանք քիչ մը պտտինք. գեղ էկողը չի նստիր:

— Քայլըլըյա սէօհպէթ հարամ. հրամանքնիդ գացէք. ես հոս հաղար գործ ունիմ. դլոխս ալ էվէլք կը ցուի կոր քի սնկէ հունա էրէրսլու ատեն չունիմ:

— (Ուրիշ մը) Վայ խըյտնէթ, մեզի մինա՞կ պիտի թւղուս:

— (Մէկ ուրիշը) Պէլքի մեր գալէն հազ չըրաւ:

— (Ուրիշ մը) Հազ ընէ չընէ, իշտէ մենք էկանք:

— (Ուրիշ մը) Քա չէ, ան ինչ ճանլար ճանի անլլման կէսն է քի, սանկըս ույարը բէք խըթ կը գտնուի:

— (Մէկ ուրիշը) Անանկ ըլլալը չի կիտնայինք նէ եալլահ կընէինք տէ հի, կուգայինք:

— (Ուրիշ մը) Կէնճ ան է քի վախիթ չունի նէ զօռ մ'ընէք, փառք Ասու մէկ օրուան չենք ես, պաշխատտեն պարապար կերթանք:

— (Մէկ ուրիշը) Աղէկ ըսիր. ողջիկ հայտէ մենք հիմա էրթանք, բան մըն ալ առնենք նէ Հոռոփիկ հանրմին վրայ բօլիցա կը քաշենք:

— (Ամենը մէկանց) Քա իրաւ, ատ աղէկ ըսիր գօշելով տունէն դուրս ելան:

Հոռոփ հանրմը իւր աղջկոնը Զապէլին հետ տունը մինակ մնացին:

Գրեթէ անկերելի է ասոնց զգացած խորին տհաճութիւնն և այլայլութիւնը նկարագրել:

Մայրը կ'ըսէ, աս ինչ բան էր գըլխուս էկաւ. աս գե՞ղ գալ էղաւ ինձի. աս ինչ տող է որ կը քաշեմ կոր. իրիկուան ալ հայրիկդ գայ նէ թիւր լիւ մըն ալ անիկա մտիկ ընելու է. իրա՞ւ, ինչ ըսէ նէ հախ ունի. օրթալը ինն աս նեղութեանը ասոնք ալ վո՞ւր կէ բուսան. պարէմ մէկ խըսըմնիս. ճանտան մէկերնիս ըլլան. խօջ աս տեղը ես մէկ խապահաթ մը չունիմ ամա, իրինկունը հայրիկդ էկած ատեն սիրտին սըխընթըյէն ույղունսուզ լախըստը մը ընէ նէ, իշտէ ան ատեն տես էղածը, հէմ սիրտկոտրուածութիւն պիտի ըլլայ, հէմ ալ տող պիտի էլլանք. հէմէն չի չի հասնէին չի կատարէին կայու. աս ինչ սայղըսըղ էն էղեր:

— Մարիկ, ասոնց ամենուն պատճառը ես եղայ. թէ որ չհուանդանայի և բժիշկն տլ անպատճառ օգափոխութիւն պէտք է չըսեր, ոչ գիւղ կուգայինք և ոչ ալ աս փորձանքները կը քաշէինք. ինձի մնայ նէ ես կըսեմ որ շուտ մը վար իջնանք. եթէ կարելի է այս շաբթու. բայց մարիկ, ի զուր սիրտդ մի հատցնեք, իրիկունը հայրիկս գայ նէ ես անոր բարկութեան առաջը առնելու կաշխատիմ, կուլամ, կը պաղատիմ և ոտքն ու ձեռքը կիյնամ. հիմա իրիկուան ուտելիքը և պառկելու տեղը նայինք:

— Նայինք ամա, աղջիկս. օրթան բան չիկայ, ինչ ընեն:

— Զըլլայ նէ խասապին խապարը բէ մէկու մը հետ, քիչ մը միս բերել տուր, քեզի հետ ծառք ծառքի կուտանք կերակուր մը կընենք. պախալէն ալ քիչ մը իւղ ու բրինձ բերել տուր. բիլու մըն ալ բիլաֆ կընենք, իշտէ էղաւ գընաց:

Շուարեալ մալրն իւր աղջկան սիրտ տալէն և անոր տոտած այս խորհուրդէն քաշալերեալ քիչ մը հանդարտեցաւ և խասապին լուր զրկեց, որ անմիջապէս եկաւ:

— Մօ վասիլ, հայտէ ուստանայ սէօլլէ պիղէ չաբուք 3-4 օգկայ էթ կէօստէրսին տիշ գաբաղը թարաֆընտան:

Վասիլը գնաց և շուտ մը վերագառնալով ըսաւ

— Պիղիմ ուստա փարայ խսէօր, չիւնքի սիզին ակա չօդ պօրճ վար վէ-

— Մօ սէն կէթիրտէ պէն աղաթ

սէօյէրիմ քօ վէրսին :

—Վէրսին ամա, պիզիմ ուսաա վէր- մէզ, չիւնքի սիզին ալա չօգ ուզաթ աք, եւ զայս ըսելով մեկնեցաւ :

Հուովի հանրմը սկսաւ մտածել եւ իւր զգացած բարկութենէն գրեթէ արուստուել պախային լուր զրկելէն ալ հրաժարեցաւ խորհելով թէ գուցէ սա եւս զլանայ :

Աղջիկն ի տես իւր մօր արտասուա լից եւ սրտաբեկ վիճակին ինք եւս ըս կսաւ լալ եւ անշուշտ շատ երկտր պի տի տեւէր այս տեսարան, եթէ մայրն յանկարծ չըսէր իւր պաւկին, աղջիկս, հանդարտէ՛ միտքս կուգայ որ վերը պաօյին մէջ երկու մէծիտիցէ պիտի ու նենամ էրթամ նայիմ տէ իրիկուան համար բան մը պէճէրէմ :

—Մայրիկ, քառորդ ոսկի մ'ալ ես ունիմ : մօրեղբօրս տուած նէ հիւանդութեանս ատեն, ան ալ տամ :

Մայր եւ աղջիկ փոխադարձ զոհօ զուրթեամբ պէտք եղածը կը պատրաստեն :

! (Շարունակելի)

ԺՈՂՈՎՐԴԱՅԻՆ ԱՌՈՂՋԱԳԱՀՈՒԹԻՒՆ

Դ

Կանայք աշխատանոցներու մէջ

(Վերջն խոսէն)

Ջերմութեան և ցրտոյ փոփոխական ազդեցութիւններն յառաջ կը բերեն շնչափողի և թօքերու անհանգըստութիւններ : Ջրոյ շոգին որ լուացարաններու մէջ ամենէն աւելի կը գրտնուի, թորքախտի սկզբնապատճառներէն մին է, մանաւանդ մեծ է իւր ազդեցութիւնը տեսանելեաց գործարանին վրայ : Անշուշտ տեսած էք լուացարար կանանց ձեռներն գրեթէ զուրկ են շօշափելեաց զգայնութենէ, իրենց վերնամաշկը կարող չէ զգալու արտաքին տպաւորութիւններն : աւելցուցէ՛ք այս զանազան անհանգստութեանց վրայ յօդացան, վտանգաւոր հիւանդութիւններէն մին՝ որուն ենթակայ կը լինին ընդհանրապէս խոնաւ միջավայրի մէջ ապրող մարդիկ, և կունենանք տխուր պատկեր մը որ ամէն օր կը ներկայանայ մեզ : Կը խրատենք լուացարար կանանց չը գործածել Աօք կամ Բօթի աղեր, հագնիլ մարմինը տաք պահող հանդերձներ, կրել կտաւէ պալապան գոգնոցներ, զգուշանալ աղտեղի գորգերու վրայ ձգուած ասեղ-

ներէն և գնտակներէն որք կրնան երբեմն վտանգաւոր վէրքերու ծնունդ տալ իրենց յանկարծական խայթումով : Միքրօպներու տեսակէտով եւս աղտեղի ճերմակեղէններն վտանգաւոր են : տամափոխիկ հիւանդութեանց միջոցին առաջին փոխանցիկներն են : քօլէրայի, ժանտախտի, կարմրախտի և այլ հիւանդութեանց ժամանակ կրնան միքրօպներու թոյներ բլլալ որոցմէ զգուշանալու համար պէտք է ամէն կասկածելի ձորձ ենթարկել տաք ջրոյ շոգւոյն որ գրեթէ անմիջապէս կը ջնջէ ամէն մահացու սերմն :

Արուեստական ծաղիկներու ճարտարութիւնն ևս առողջապահութեան հակառակ պայմանաց ներքեւ կը գրտնուի : Ամէն օր տասն երկու ժամ անընդհատ, նեղ գործարանաց մէջ, սեղաններու առջեւ նստած, դեռահասակ աղջկունք մետաղեայ ցօղի մը վրայ կը հաստատեն փունջին կամ ծաղիկն զանազան մասերն առանց ուշադրութիւն նուիրելու իրենց մարմնոյն որ այլ և այլ ձեւեր կ'առնու նոյն միջոցին : Ծաղկագործ աղջկան համար ճշմարիտ վտանգը կը կայանայ այն ներկերուն մէջ զորս կը գործածէնա : Կը շնչէ անընդհատ մթնոլորտ մը ուր սնդիկի, կապարի, պղնձի, և արսէնի փոշիներ կան որք յառաջ կը բերեն երբեմն վտանգալի թունաւորումներ : Առողջապահութիւնը կը պահանջէ որ այդ տեսակ արուեստով զբաղող կանայք իրենց աշխատութեան միջոցին հագնին դիմակներ և գդակներ, և աշխատանոցին մէջ երբէ՛ք չը ճաշեն և մերթ ընդ մերթ բացօդեայ վայրեր ելնելն պտոյտներ ընելու համար :

Ժամագործութեան համար եւս կանայք կը գործեն : մեր գործածած ժամացոյցներն և գոհարեղէն զարդերն թերեւս իգական սեռի փափուկ ձեռաց գործունէութեան արդիւնքն են : Ընդհանրապէս այս արուեստներն, գլխու ցաւ և պտոյտ կը պատճառեն գործաւորաց : Խոշորացոյցն կը տկարացնէ աչերն և կուրծքին ու դիմաց հակեալ դիրքը կուտայ վանդակին ահաւոր ձեւ մը, վտանգաւոր շնչառական գործողութեանց և մատներն կենթարկուին իրենց չափազանց գործունէութեան պատճառաւ երերման և այս երեւոյթն շատ անգամ տեսած ենք գաշնակահարներու և գրագիրներու վրայ :

Մ. Գ. ՄՕՁԵԱՆ

ԱՌՏՆԻՆ ԽՐԱՏՆԵՐ

6. Կօշիկները քայլեցնելու ժամանակ եթէ կը փափաքիք փայլուն կօշիկներ ունենալ, կը խրատեմ որ առնուք 25 հարիւրերորդական կնքամոմ և զայն հալեցնէ՛ք դգալ մը մօրի հետ և հետը խառնեցէ՛ք նաեւ մի քանի կաթիլ Բերեպէնին և պիտի ունենա՛ք յայնժամ կօշիկներ որք հայելոյ նման պիտի փայլին :

7. Ինչպէ՛ս կը յայտնուի կաթին շուրճիկը : Կուզէ՛ք հասկնալ թէ՛ կաթը զուտ է և կամ խարդախեալ : Պողպատեայ ասեղ մ'առէ՛ք և լաւ մը շփեցէ՛ք որպէս զի վրան հարպային ուէ նիւթ մը չը թողուք : Ընկղմեցէ՛ք այդ ասեղն կաթին մէջ և յետո՛յ դուրս հանեցէ՛ք զայն ուղղաձիգ դիրքով : Եթէ կաթը զուտ ըլլայ, ասեղին ծայրը կաթիլ մը պիտի մնայ : Բնաւ չըմնար եթէ կաթը խարդախեալ է :

8. Հասկնելու խարժախեան ճանաչելու եղանակ թէ : Հալեցուցէ՛ք 50 կրամ խոհանոցի աղ կէս լիտր ջրոյ մէջ : Եթէ բուրովին թարմ հաւկիթ մը նետեք այդ հեղանիւթին մէջ, մինչեւ յատակը պիտի իջնէ : Եթէ հաւկիթը թարմ չէ, հեղանիւթին մէջտեղը պիտի մնայ : Եթէ շատ աւելի հին է, ջրոյ մակերեւոյթը պիտի ելնէ :

9. Սենյակի թէ քառուղի դրբուք : Եթէ կուզէք հասկնալ ձեր բնակած սենյակի առողջարար կամ վատառողջ օդն, ամանի մը մէջ 500 կրամ չը մարած կիր դրէ՛ք և սենյակին մէջ պահեցէ՛ք : 24 ժամէն վերջ կշռեցէ՛ք կիրը, եթէ մէկ կրամ աւելի կշռէ, սենեակն բնակելի է և օդն հետեւաբար առողջ, իսկ եթէ կիրը 5 կամ 6 կրամ աւելի կշռէ, այն ատեն սենեակը անբնակելի է և օդն վատառողջ :

10. Հարբախէ՛ դեղ : Դրպաննուղ մէջ աղով լի սրուակ մը պահեցէ՛ք և միշտ քթերնուղ տարէ՛ք և վեր քաշեցէ՛ք : Ահաւա՛սիկ ընտիր դեղ մը հարբուխի :

1. Բերանի ճարտարան : Երբ սըլտոր պարունակող կերակուրներ ու-

տէ՛ք, վստահ էք թէ՛ ձեր բերնէն ա-
նախորժ հոտ մը դուրս պիտի ելնէ և
անհանգստութիւն պիտի պատճառէ
հետեւաբար ներկայ եղող անձանց: Այդ-
տեսակ կենակուրներէ վերջ, լաւագոյն
եղանակն է քիչ մը ազատագրել ծամել,
և կատարելագոյն մարտի բերանը խըն
ձոր մը կրծելով:

12. Անշուք Կէ կարգու.— Երբէ՛ք մի
կարգաք անկողնոյ մէջ հորիզոնական
դիրքով պառկած ժամանակնիդ: Եթէ
չէք կրնար այդ սովորութենէն հրա-
ժարիլ, որ ձեր կամքէն աւելի զորա-
ւոր կրնայ ըլլալ, հետեւեալ կանոնաց
համեմատ գործեցէ՛ք. ամեն երեկոյ
աչքերնիդ լուացէ՛ք աղի ջրով չափա-
զանց աղ մի գործածէ՛ք այրելու ազ-
դեցութիւնը յառաջ չը բերելու հա-
մար: Տեսանելիաց գործարանին համար
օգտակար է զայս զոր բազումք փոր-
ձելով հաստատած են: Հեռու դրուած
կանթեղի մը, աղօտ լուսով մի կար-
գա՛ք և մի գրէ՛ք. այս գործողութիւ-
նը աչաց համար այնքան փաստակար է
որքան գրքի մը ընթերցումն բոցավառ
և հրակէզ արեգակի մը լուսովը:

13. Սեղանի աղ.— Երբեմն խոնաւ ե.
ղած ժամանակ սեղանի աղն կ'այլալի
և հեղուկնալով անգործածելի կը լինի:
Ասոր համար աւա՛սիկ պարզ խրատ մը
որ շատ ազդու է. կրնաք ինքնին ընել.
Աղը լաւ մը շորցուցէ՛ք, ապա 100 մա-
սին 8 կամ 10 մաս փոշիացեալ նշաս-
տակ մէջը դրէ՛ք. երկուքն պիտի խառ-
նուին և աղը խոնաութեան դէմ պի-
տի զնէ: Ընդհանրապէս յիշեալ երե-
ւոյթն ծովեղերեայ բնակարանաց մէջ
տեղի կ'ունենայ:

Մ. Գ. ՄՕՁԵՍՆ



Վաճառականի գործակատար մը
որ անգղիներէն չէր գիտեր, անգղիա-
կան վաճառաբարձ շողենաւ մը եր-
թարով, իւր գործին նկատմամբ նա-
ւապետին հետ ֆրանսերէն կը խօսի:
Նաւապետը անգղիներէն լեղուաւ

կ'մխի հայհոյել, զոր կը հասկնայ գոր-
ծակատարը միայն անոր ձեւերէն և
թարգմանի մը միջոցաւ պատճառը կը
հարցնէ նաւապետին, որ կ'ըսէ, այդ-
մարդը անգղիներէն գիտէ:

—Ո՛չ. կը պատասխանէ:

—Քանի որ չգիտէ. ինչպէս կը
հասկնայ թէ ես հայհոյեր եմ:

—Խօսելու ձեւէն, զոր ես իմ արթ-
նութեամբս հասկցայ, և իւր թարգ-
մանին միջոցաւ կը հարցնէ:

—Այդ աւանակը ֆրանսերէն գի-
տէ՛:

—Ո՛չ:

—Յունարէ՛ն:

—Ո՛չ:

—Գերմաներէն:

—Ո՛չ:

—Հայերէ՛ն:

—Ո՛չ:

—Քուրքերէ՛ն:

—Ուրեմն. կը յարէ այդ պ. աւա-

—Ո՛չ:

նակը ինչո՛ւ կը բարկանայ և կը հայ-
հոյէ անգղիներէն չգիտնալուս համար:
Նաւապետն ասոր վրայ ամհնալով
ներում կը խնդրէ, ձեռքը կը սեղմէ
և պրանթ կը հրամցունէ:

ԱՁԴ

Հանդիսիս տպագրութիւնն երէկ
շատ ուշ աւարտած ըլլալով, այսօր կըր-
ցած է ցրուիլ:

ՀԱՅ ԹԵԱՎԱՃԱՌԱՏՈՒՆ

ՊԱՀՃԷ ԳԱՓՈՒ

ՃԵԼԱԼ ԵՒՅ ՅԱՆԻՆ ՏԱԿԸ

Յիշեալ վաճառատան մէջ կը գտնուին
ամեն տեսակ խիստ ընտիր և թարմ թէյեր,
որ յատկապէս բերել տրուած են Չինաստա-
նէ, ճապոնէ, և Հլանտայէ:

Այս վաճառատունն որ հաստատեալ է մի
քանի տարիէ հետէ, իւր ուղղութեամբ,
պատուաւորութեամբ և անխարդախ գոր-
ծաղնութեամբ մեծ անուն և համբաւ կը
վայելէ աստ և թէ ի գաւառս և ուրի խիստ
բազում յաճախորդներ:

Վաճառուներ կը լինին մեծաքանակ և
թէ փոքրաքանակ պիտի չափաւոր են:

ԱՐՏՕՆԱՏԷՐ ԵՒ ՏԵՐԻՆ
ԱՆՏՕՆ ՍԱՔԱԵԱՆ

ԽՄԲԱԳԻՐ Մ. ԳԱՓԱՄԱՃԵՂՆ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ

Ն Ե Ա Ն Պ Է Ր Պ Է Ռ Ե Ա Ն



ՌՈՒԲԷՆ ՄԵԼՔՈՆԵԱՆ ԵՒ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Ո Ս Կ Ե Ր Ի Զ-Ժ Ա Մ Ա Գ Ո Ր Ծ

Բերա, հրապարակ Թիւնէլէ Իլ- 519

Վաճառումն և նորոգութիւնք ոս-
կերչական նիւթոց և ժամացոյցի շք-
թայի և այլն:

Ռուբէն Մելքոնեան և Ընկ. պատիւ ու-
նին ծանուցանել արդոյ հասարակութեան,
թէ ի Բերա, Թիւնէլի հրապարակին վրայ
Ռսկերիչ-ժամագործի վաճառատունն մը բա-
ցած է, ուր ամեն տեսակ ոսկերչական նիւ-
թեր, ժամացոյցներ, շքթայներ և այլն կը
վաճառուին և կը նորոգուին դիւրամատչելի
պայմաններով և աժան գնով:

Ուստի կը յորդորենք ազնիւ յաճախորդ-
ներն որ անգամ մը այցելեն յիշեալ վաճա-
տունն, ապահով ըլլալով որ ամեն տեսակ
խրութիւն և խնամք պիտի գտնեն նոյն
աճառատան մէջ:

ՆՇԱՆ ԼՄԱԳՈՒԹԵԱՆ
ԴՊՁԱՄԻՆՈՒ ԴՊՁԱ
ԿԱՌՔԵՐՈՒ ՎԵՌԱԲԵՐԵԱԼ ԱՊՐԱՆՔՆԵՆ
ԵՐԱՔ, ՊՈՂՊՈՏ, ԵՒ ՉԱՆՍՈՒՆ ՆԵՐՍԷՐ
Դաշմաթա Մանուկայիչ փողոց Թիւ 48
Սուրբ Կէստէ կենտրոն փողոց Թիւ 36
ՊՕԼԻՍ

Ֆ Ռ Ա Ն Գ Ֆ Օ Ր Թ Ո Ւ Ա Ջ

Տ Է Ն Ի Ջ Ս Ի Կ Ո Ւ Բ Թ Ա Գ Ո Ւ Մ Բ Ա Ն Ե Ա Ս Ը

Սէրմանէ ֆրանգ 8,250,000 Ինթիեաթ ազչէսի ֆրանգ 4,270,000

Մեզքիւր գումարանիւ տէնիզ գաղալարընա գարըը վարօրյարտա վէ կէ միլէրտէ եիւքլէնիլէն մալլէրի, վէ քէզալիք բօսթա իտարէլէրինէ թէսլիմ օլունան միւճէվէրաթ վէ եախօտ պանգնօթ էվրագը զանէթ էհվէնիեթ վէ սուհուլէթլէ սիկուրթա իտէր :

Պու ճիհէթլէ մէպալիդի քիւլլիեթեթի սիկուրթա իտէպիլմէք իչին իչպու գումարանիւ էվրօրաւա 13 թանէ պիւեիւք սիկուրթա գումարանիւարըյա պիլլէչմիլ տիր : Պունլարըն թէքմիլ սերմանէ վէ իհթիեաթ ազչէսի 100,000,000 ֆրանգը կէչէր :

էքմիլ Թիւրքիա աճէնթէսի

Հ Ա Մ Պ Ո Ւ Բ Կ Մ Ի Ի Ն Ի Խ Պ Ի Լ Է Շ Մ Ի Շ

Ե Ա Ն Կ Ը Ն Ա Գ Ա Ր Շ Ը Ս Ի Կ Ո Ւ Բ Թ Ա Գ Ո Ւ Մ Բ Ա Ն Ե Ա Ս Ը

Սէրմանէ	Ֆրանգ 8,000,000
Ինթիեաթ ազչէսի 1888 Յունիսէ գատար	Ֆրանգ 4,817,262
Սէնէվի իրաւ 1888 Յունիսէ գատար	Ֆրանգ 10,069,700

Մեզքիւր գումարանեալար տէրօղիթօլար վէ խանէլէր վէ անլէր իչինսէ պուլունան մալլէր վէ մօպիլեալարը զանէթ էհվէնիեթ վէ սուհուլէթլէ, թէէմիլնաթը գազիլիեթ թանթընտա օլարագ սիկուրթա իտէրլէր :

Իսթանպօլ աճէնթէսի

Իսթանպօլ, Պահճէ-գարու, Եօրկիատիս խան Գ Ա Ռ Ն Ի Կ Ա Ս Տ Ո Ւ Ա Ս Տ Ո Ւ Բ

Մալիւմաթ.— Շիրքէթլէրիմիզին Տէրիսաատէթ պանքէրլէրի պուլունան ներսէսեան Բէտէր վէ Մախտուժու էֆէնտիլէր հիսապը կէօրիւմիւլ, վէ միւտիլիեթի ումուլիեթ թարաֆընտան թաստիզ օլունմուլ հէր կիւնա զարար ու զիեանը թազմիլնէ թէմալիլլէ թալիմաթ ախզ իլլէմիլլէր տիր :

Լ Ա Ր Ո Ւ Կ Ա Ն Է Ջ

Կեզրօնաւոր 18, Սէրմաք փօրց, Բարիզ
 Գրտմաք լուր, 6,000,000 Վճարեալ վնասներն իբր 30,000,000

Աւելի քիչ արձան տեղեկութեանց համար դիմել ի գրտմանիս քննարար գործա-
 կալութեան . Ղալաթիլա . Մանսուր իլլէ փօրց : Թիւ 2, Ճիհէման խան, Գամմա-
 սօլի Պահպանի գիւտար

Քննարար գործալարը բովանդակ թուրքից և Յունաստանի
 ՍՄՏՆ ԲԱՅԱՐԸՆԱՆ ԵՒ ԸՆԴ

(ԼԱՍԳԻԻԲ)



ԱՆ ՐԱՄԱՆՈՅ ՆՈՐԹ ՊՐԻԹԻՇ ՐԻՊԷՐ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

Մեր յաճախողներու փափաքանաց համաձայն, մեր այս տարուան քաուչուէ մուճակներն, որք իրենց վրա ալ իրբու նշան կչիւ մը կը կրեն խիստ ճաշակաւոր, նուրբ և հաստաւուն շինուած են կոպ քէրտով :

Պօլտոյ հրապարակին վրայ կրկար առննէ ի վեր հանչուած է թէ մեր քաուչուէ մուճակները կը գերազանցեն քան տարիէ ի վեր գործածուած բոլոր մուճակները :

Մեր այս մուճակներու ներքին կողմը կչիւ մը և արտաքին կողմն ալ առիւծի մը պատկերը գրոշմուած է իրբու նշան, կը վաճառուին ի Պօլիս Սուլթան Համամ աղբիւրի մօտ Սէպուհ աղա Տէմիրճեանի թիւ 57 և 59 խանութն և բոլոր քաուչուէ մուճակ վաճառողներու քով, Կեզրօնաւորին է ի Պօլիս, Պահճէ Գարու, Գոճաման Օղլու խան, Ճօրճի Կիարալի թիւ 1 ամթերանոցը :

Ֆ Օ Ր Թ Ո Ւ Ն Ա

ԱՆՏՆԻՄ ՈՒՄՈՒՄԻ ՍԵԿՈՒՐԹԱ ԳՈՒՄԲԱՆԵԱՍԸ

1668 րէ Գեւէնիս թէտիս օլունմուլ րըբ 1745 րէ Տէտէլարօթիս թէտիս օլունմուլ րըբ
 ԷՐՄԱԵԷ 1,875,000 ՅՐԱՆԳ ՍԷՐՄԱԵԷ 3,750,000 ՅՐԱՆԳ

ԻՀԹԻԵԱԹ ԱԳՃԷՍԻ 1,337,500 ԻՀԹԻԵԱԹ ԱԳՃԷՍԻ 3,099,367. 15 ՅՐ

Տէրտաատէթ բիշաարընտա պիլլէչմիլ օլուն իչպու սիկուրթա գումարանեալարը . քէֆալէթի միւթէգապիլէ իլէ հէր նէվի էմթաա վէ ազչէ կրուբօլարընը, տէնիզ, նէէր վէ գարա նագիլեաթը թէնիլքէլէրինէ գարըը զալլէթլէ ֆաեիտէպալիս չէրանիթ Ըլէ սիկուրթա իտէրլէր :

Տ Ի Ի Ս Է Լ Տ Ո Ր Ֆ Է Ր

Տ Է Ն Ի Ջ, Ն Է Ղ Ր Վ Է Գ Ա Ր Ա ՈՒՄՈՒՄԻ ՍԵԿՈՒՐԹԱ ԳՈՒՄԲԱՆԵԱՍԸ

1874 րէ Համպտըլիս թէտիս օլունմուլ րըբ 3,750,000 ՅՐԱՆԳ

ՍԷՐՄԱԵԷ 3,750,000 ՅՐԱՆԳ

ԻՀԹԻԵԱԹ ԱԳՃԷՍԻ 600,000

Հ Ա Ն Ջ Է Ա Ր Ի Շ Է

Ե Ա Ն Կ Ը Ն Ա Գ Ա Ր Շ Ը Ս Ի Կ Ո Ւ Բ Թ Ա Գ Ո Ւ Մ Բ Ա Ն Ե Ա Ս Ը

1874 րէ Համպտըլիս թէտիս օլունմուլ րըբ .

ՍԷՐՄԱԵԷ 3,750,000 ՅՐԱՆԳ

ԻՀԹԻԵԱԹ ԱԳՃԷՍԻ 600,000

Իչպու սիկուրթա գումարանեալար, հէր նէվի էմլաք վէ էչեաք, առպար վէ մողաազա աէրուլէրիսաէթի էմթաաք, էն զիեսառէ ֆաեիտէպալիս շարթուր իլէ սիկուրթա իտէր : Թալիլիլի մալիւմաթ ալմաք իսթիեթլէր, պալէտաթ զիքր օլունան իւլ գուճաանեալարըն ումուլի մալալաթ կիւզարը պուլունան իսթալալալա Պահլէ-Գարու սունաա Րալիս Բալա խանընտա նիւմէր 13 վէ 14 աթ ՏԻՐԱՆ Ս ՄԱՆՈՒԿԵԱՆ էֆէն, տիեթ միւրաճաթ իթմէկէ ազլէթ օլունմուլ :